

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎՐՈՊԱ ՄԻԱՎՈՐՈՒՄ, ՀԿ



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐԻ  
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ  
ՀԱՆՐԱՅԻՆ  
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ  
ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

Ն Ա Խ Ն Ա Կ Ա Ն    Զ Ե Կ Ո Ւ Յ Ց



Օ Գ Ո Ս Ո Ս  
2 0 1 8

## ՆԱԽԱԲԱՆ

2018թ. ապրիլից «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ԻԵՄ) Հայաստանի Հանրապետության դատական համակարգի ամրապնդման և դատական բարեփոխումների իրականացմանն ուղղված իր ջանքերի շրջանակում իրականացրել է ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի ընտրական գործընթացի դիտարկում:

Դիտարկումը կատարվել է ընտրական գործընթացի շահագրգիռ կողմերի հրապարակումների, այդ թվում՝ հայտարարությունների, հարցազրույցների, ելույթների և այլնի գնահատման մեթոդաբանության հիման վրա՝ գործընթացի թափանցիկության, օբյեկտիվության և արդարության չափանիշների լույսի ներքո:

ՀՀ Սահմանադրական դատարանը միակ բարձրագույն ատյանն է, որն իրականացնում է սահմանադրական արդարադատություն և լուծում ընտրական վեճերը: Սահմանադրական դատարանը կազմված է ինը դատավորից: Համաձայն 2015թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների՝ ՍԴ դատավորների թեկնածուների առաջադրումը հաջորդաբար իրականացվում է իշխանության

տարբեր թևերի՝ Հանրապետության նախագահի, ՀՀ կառավարության և ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից:

ՍԴ դատավոր կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը:

## **ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ ՍԴ ԴԱՏԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Երբ 2018թ. մարտին Գագիկ Հարությունյանը ՍԴ նախագահի պաշտոնից հրաժարականի դիմում ներկայացրեց՝ նորաստեղծ Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնն զբաղեցնելու նպատակով, ՍԴ դատավորի թեկնածու առաջադրելու հերթը ՀՀ նախագահինն էր:

2018թ. ապրիլի 26-ին նախագահ Արմեն Սարգսյանը ՀՀ ՍԴ դատավորի պաշտոնում ՀՀ Ազգային ժողովին առաջադրեց պարոն Էմիլ Բաբայանի թեկնածությունը:

Նախագահ Արմեն Սարգսյանի կողմից հիշյալ թեկնածուի առաջադրումից հետո, ավելի քան 30 հասարակական կազմակերպություններ, այդ թվում՝ ԻԵՄ-ը, հիմք ընդունելով Էմիլ Բաբայանի թեկնածության առաջադրման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության բացակայությունը, նախագահին կոչ արեցին հետկանչել ՍԴ դատավորի պաշտոնում իր ներկայացրած թեկնածության առաջադրումը՝ ձեռնամուխ լինելով այնպիսի ընթացակարգերի ձևավորմանը, որոնք կապահովեն նմանբարձր դատական պաշտոնում թեկնածուի առաջադրման թափանցիկ, հրապարակային և արդար ընթացակարգերով գործընթաց:

Հակառակ դեպքում, հասարակական կազմակերպությունները կոչ էին անում ՀՀ օրենսդիր մարմնին չքվեարկել նախագահի առաջադրած թեկնածուի օգտին և Հանրապետության նախագահին հնարավորություն տալ թափանցիկ, հրապարակային և արդար ընթացակարգով մրցույթի միջոցով ընտրել ՍԴ դատավորի թեկնածու [3]:

Ի հավելումն խնդրահարույց թեկնածության առաջադրմանը, ԻԵՄ-ը վկայակոչում էր թեկնածուի կենսագրական տվյալների (CV) և ՍԴ դատավորի թեկնածուին առաջադրվող պահանջների անհամապատասխանությունը [4]:

Չնայած այն հանգամանքին, որ նախագահ Սարգսյանը հետ չկանչեց Էմիլ Բաբայանի թեկնածության առաջադրումը, վերջինս խորհրդարանում 2018թ. մայիսի 4-ին չստացավ պատգամավորների ձայների  $\frac{3}{5}$ -ը:

Համաձայն տարբեր պատգամավորների պնդման՝ Էմիլ Բաբայանի՝ որպես ՍԴ դատավորի ընտրության ձախողման հիմնական պատճառը նրա առաջադրման գործընթացի ոչ հրապարակայնությունն ու գաղտնիությունն էր [5]:

Համաձայն ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի՝ ՍԴ դատավորի թափուր տեղի համար նոր թեկնածուն պետք է առաջադրվեր իրավասու մարմնի կողմից՝ առաջին քվեարկությունից հետո՝ տասն օրվա ընթացքում (հոդված 141 (8)):

Մայիսի 13-ին 112 գործող փաստաբան և 25 հասարակական կազմակերպություն տարածեցին հայտարարություն և կոչ արեցին նախագահ Արմեն Սարգսյանին ստեղծել հեղինակավոր իրավաբաններով համալրված խորհրդակցական մարմին: Այս խորհրդակցական

մարմինը պետք է հավասարության և արդարության սկզբունքներին համապատասխանող թափանցիկ և հրապարակային մրցույթի իրականացման միջոցով, ՀՀ նախագահին ներկայացնել մրցույթին մասնակցած հավակնորդների վերաբերյալ խորհրդատվական կարծիք, որոնցից և ՀՀ նախագահն Ազգային ժողովի կառաջադրեր իր ընտրությամբ լավագույն թեկնածուին [6]:

2018թ. մայիսի 18-ին ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը, ի պատասխան հասարակական կազմակերպությունների մտահոգություններին և առաջարկություններին, հայտարարեց, որ մայիսի 17-ին նամակով դիմել է ԱԺ նախագահ Արա Բաբլոյանին՝ տեղեկացնելով, որ ՍԴ դատավորի թեկնածու կառաջադրի միայն այդ հարցով լայն խորհրդակցական գործընթացներ կազմակերպելուց հետո, որից հետո, ԱԺ-ին կներկայացնի ՀՀ ՍԴ դատավորի ընտրության համար ամենաարժանի թեկնածուին [7]: ՀՀ նախագահի այս քայլը բարձր գնահատվեց քաղաքացիական հասարակության և մասնագիտական հանրության կողմից [8]:

2018թ. մայիսի 20-ին, ավելի քան 200 գործող փաստաբան, նախագահ Արմեն Սարգսյանին առաջարկեցին՝ որպես ՍԴ դատավորի թեկնածու, քննարկել փաստաբան Վահե Գրիգորյանի թեկնածությունը [9]: Մեկ օր անց, մայիսի 21-ին, Փաստաբանների պալատի երկու անդամներ ահազանգեցին, որ Վահե Գրիգորյանի թեկնածությունը պաշտպանող փաստաբանների մի մասի նկատմամբ ճնշումներ են իրականացվում այնպիսի անհատների կողմից, որոնք սերտ հարաբերություններ ունեն ՀՀ Սահմանադրական դատարանի գործող նախագահ Հրայր Թովմասյանի հետ [10]: Ճնշումների հետևանքով փաստաբաններից մեկը հետ կանչեց իր ստորագրությունը Վահե Գրիգորյանի թեկնածությունը երաշխավորող փաստաթղթից: ԻԵՄ-ը խիստ դատապարտեց կատարվածը՝ շահագրգիռ կողմերին

կոչ անելով դադարեցնել բոլոր տիպի ճնշումները Փաստաբանների պալատի անդամների նկատմամբ:

2018թ. հունիսի 1-ին, գրավոր պատասխանելով «Ազատություն» ռադիոկայանի հարցմանը, ՀՀ նախագահի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի վարչությունը տեղեկացրեց, որ նախագահ Արմեն Սարգսյանը պատրաստվում է դիմել ՀՀ Սահմանադրական դատարան պարզելու ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասերի սահմանադրականության հարցը, քանի որ 141-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ եթե Սահմանադրական դատարանի դատավորը չի ընտրվում, ապա ԱԺ քվեարկությունից հետո՝ տասնօրյա ժամկետում, իրավասու մարմինն առաջադրում է նոր թեկնածու, մինչդեռ ՀՀ նախագահին այդ ժամկետում նոր թեկնածու չէր առաջադրել:

Ի հավելումն այս ամենի, ՀՀ նախագահի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի վարչությունը տեղեկացրեց, որ նախագահ Արմեն Սարգսյանը որոշում է կայացրել ստեղծել ժամանակավոր խորհրդակցական աշխատանքային խումբ՝ ՍԴ դատավորի հավակնորդների վերաբերյալ կարծիքներ ձևավորելու և իրեն ներկայացնելու համար, որոնք ամփոփելով, սեղմ ժամկետում, ԱԺ-ին կառաջադրի ՍԴ դատավորի թեկնածու [11]:

Նախագահ Արմեն Սարգսյանը ժամանակավոր խորհրդակցական աշխատանքային խումբ ստեղծելու իր մտադրությունը բարձրաձայնելուց քառասուն օր հետո միայն, հուլիսի 11-ին, ստորագրեց կարգադրություն, որով սահմանվում էր ինչպես խորհրդակցական ժամանակավոր աշխատանքային խմբի կազմը, այնպես էլ ՍԴ դատավորի թեկնածուի համար դիմելու և ընտրությունը կազմակերպե-

լու, ժամանակավոր աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամի կողմից յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ անանուն խորհրդատվական կարծիքը նախագահին փոխանցվելու կարգը [12]:

Այսպիսով՝ չնայած այն հանգամանքին, որ 2018թ. մայիսի 18-ին ՀՀ նախագահը հրապարակավ հայտարարեց խորհրդատվական գործընթացների միջոցով ՍԴ դատավորի թեկնածու առաջադրելու իր մտադրության մասին, նա շատ երկար ժամանակ որևէ քայլ չէր ձեռնարկում իր խոստումն իրականացնելու ուղղությամբ:

2018 թ. մայիսի 5-ին ԻԵՄ-ը մտահոգություն հայտնեց առ այն, որ ՀՀ ՍԴ դատավորի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար ՀՀ նախագահի առաջադրած թեկնածուի՝ խորհրդարանի կողմից չընտրվելուց հետո, մեկամսյա ժամկետում ՀՀ նախագահը նոր թեկնածու նշանակելու ուղղությամբ ակտիվ ու շոշափելի քայլեր չի ձեռնարկել [13]:

2018թ. հունիսի 18-ին ՀՀ նախագահի կարգադրությամբ հաստատվեց խորհրդակցական ժամանակավոր աշխատանքային խմբի կազմը [14]: Խորհրդակցական ժամանակավոր աշխատանքային խումբի կազմ ներգրավվեցին հետևյալ պաշտոնատար անձինք.

1. Էմիլ Տարասյան — ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար,
2. Գևորգ Դանիելյան — ԲԴԽ ներկայացուցիչ,
3. Նինա Փիրումյան — ՄԻՊ ներկայացուցիչ,
4. Աննա Վարդապետյան — Արդարադատության նախարարի ներկայացուցիչ,
5. Սամվել Դիլբանդյան — ԵՊՀ ներկայացուցիչ,
6. Անահիտ Մանասյան — Արդարադատության ակադեմիայի ներկայացուցիչ,

7. Լևոն Գևորգյան — Հայաստանի ամերիկայի համալսարանի ներկայացուցիչ,
8. Կարին Յովսէփյան — Հայաստանում ֆրանսիական համալսարանի ներկայացուցիչ,
9. Արամ Վարդևանյան — Հայ-Ռուսական (սլավոնական) համալսարանի ներկայացուցիչ,
10. Տարոն Սիմոնյան — ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչ,
11. Վահե Ենգիբարյան — «Հայաստանի Հանրապետության դատավորների միություն» ՀԿ-ի ներկայացուցիչ,
12. Զորայր Հարությունյան — ՀՀ նախագահի ներկայացուցիչ, փաստաբան:

ՄԴ դատավորի թեկնածուների հավակնորդների հարցազրույցը նշանակվեց 2018թ. հուլիսի 7-ին, նախագահական նստավայրում:

Հուլիսի 29-ի հրապարակվեց ՄԴ դատավորի թեկնածուի ընրությանը մասնակցելու նպատակով դիմում ներկայացրած հինգ հավակնորդներից չորսի անունները, որոնք էին. Արթուր Վաղարշյան՝ ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ամբիոնի վարիչ, Իշխան Նազարյան՝ ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմի ղեկավար, Բաբկեն Սահրադյան՝ փաստաբան, Վահե Գրիգորյան՝ փաստաբան: Հինգերորդ դիմողը, մինչև հարցազրույցների ընթացքը իր անունը հրապարակելու համաձայնություն չէր տվել:

2018թ. հուլիսի ԻԵՄ-ը տարածեց հայտարարություն [15]՝ բարձրաձայնելով մի շարք վերապահումներ նախագահ Արմեն Սարգսյանի կողմից ստեղծված աշխատանքային խմբի կազմի և գործառույթների վերաբերյալ: Հայտարարությունում ասվում էր, որ աշխատանքային խումբը չի ստեղծվել բաց և թափանցիկ գործընթացների արդյունքում: Սկզբունքներն ու չափորոշիչները, որոնց հիման վրա ընտրվել են խմբի անդամները, առնվազն անհասկանալի են: Անհասկանալի և չպատճառաբանված են աշխատանքային խումբ ներգրավված համալսարանների և այդ համալսարանների ներկայացուցիչների ընտրության սկզբունքները: Չպատճառաբանված են նաև այն սկզբունքներն ու չափանիշները, որոնց հիման վրա Հայաստանում առկա մի շարք հասարակական կազմակերպություններից ընտրվել է «Հայաստանի Հանրապետության դատավորների միություն» ՀԿ-ն և դրա ներկայացուցիչը:

Նույնքան անհասկանալի և չհիմնավորված են այն սկզբունքներն ու չափանիշները, որոնց հիման վրա ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Զորայր Հարությունյանն աշխատանքային խմբում ներգրավվել է որպես Հանրապետության նախագահի ներկայացուցիչ:

Անհասկանալի էր, թե ինչ անհրաժեշտությամբ է պայմանավորված խորհրդակցական ժամանակավոր աշխատանքային խմբում ներգրավվել ՀՀ նախագահի երկու ներկայացուցիչ, եթե բոլոր մյուս ինստիտուտներն ունեին մեկական ներկայացվածություն:

Մտահոգիչ էր նաև այն հանգամանքը, որ աշխատանքային խմբի անդամներից մեկը՝ ՄԴ դատավորի թեկնածուի հավակնորդներից մեկի գործընկերն էր: Խմբի այլ անդամներից երկուսը երաշխավորել էին հավակնորդներից մեկին՝ որպես ՄԴ դատավորի թեկնածու: Մեկ այլ հավակնորդ դասախոսել էր աշխատանքային խմբի անդամների մեծամասնությանը:

Խորհրդակցական ժամանակավոր աշխատանքային խմբի յոթ անդամի տարիքը ցածր էր քառասունից և, ըստ էության, նրանք՝ որպես ընտրություն կատարող աշխատանքային խմբի անդամներ, չէ-

ին համապատասխանում այն չափանիշներին, որոնք առաջադրված են ՄԴ դատավորի թեկնածուին: Ի հավելումն այս ամենի՝ աշխատանքային խմբից և որևէ մեկը չունենալու բարձր դատական մարմիններում թեկնածուների ընտրության փորձառության:

ԻԵՄ-ը մտահոգություն է հայտնել նաև հարցազրույցների անցկացման ընթացակարգի վերաբերյալ, քանի որ սահմանված չեն եղել ո՛չ հարցազրույցների ընթացակարգերը, ո՛չ էլ ՀՀ ՄԴ դատավորի թեկնածուի ընտրության չափանիշները: Չի եղել ոչ մի կարգադրություն հարցազրույցների անցկացման համար: Չի սահմանվել նաև հավակնորդների հարցազրույցների տևողության առավելագույն սահմանը: Կանոնակարգով հստակեցված չեն եղել, թե արդյոք աշխատանքային խմբի անդամների կողմից տրվող խորհրդատվական կարծիքները վերաբերելու են հավակնորդների մասնագիտական որակներին և/կամ անձնական հատկանիշներին, թե այլ ասպեկտների և:

Ինչպես հավակնորդներից մեկի հարցազրույցի ժամանակ պարզ դարձավ, աշխատանքային խմբի անդամները պատրաստվում էին ստուգել հավակնորդների թե՛ անձնական, թե՛ մասնագիտական որակները, չնայած այն հանգամանքին, որ հենց իրենց մեծամասնությունը չէր համապատասխանում այն չափանիշներին, որոնք առաջադրված են ՄԴ դատավորի թեկնածուին: Ակնհայտ էր, որ աշխատանքային խումբը չի պատրաստվում ներկայացնել միասնական կարծիք:

Համաձայն ՀՀ նախագահի կարգադրության՝ աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամ յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ անանուն խորհրդատվական կարծիքը պետք է փոխանցեր աշխատանքային խմբի ղեկավարին, որն էլ իր հերթին, այդ կարծիքները պետք է փոխանցեր ՀՀ նախագահին: Այս գործընթացում

հերթական անգամ բացակայում էին այն հստակ սկզբունքներն ու չափորոշիչները, որոնց հիման վրա ՀՀ նախագահը պետք է որոշում կայացներ: Սա նշանակում էր, որ ՄԴ դատավորի թեկնածուի ընտրությունը հերթական անգամ թողնվում է ՀՀ նախագահի հայեցողական/կամայական որոշմանը:

ԻԵՄ-ին չեն տրամադրվել հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի պատճենները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ԻԵՄ-ը անհրաժեշտ է համարում ամրագրել, որ Կանոնակարգով նախատեսված աշխատանքային խմբի անդամների առանձին և անանուն կարծիքների տրամադրման ընթացակարգը, առանց այդ կարծիքների համար սահմանված սկզբունքների և չափանիշների, չի կարող համարվել որոշակի և բավարար ստանդարտ՝ ՄԴ դատավորի թեկնածու ընտրելու համար:

2018թ. հուլիսի 7-ին տեղի ունեցան ՄԴ դատավորի թեկնածուի հինգ հավակնորդների հարցազրույցները: ԻԵՄ-ը դրական է գնահատում այն հանգամանքը, որ գործընթացը բաց էր ԻԵՄ-ի դիտորդական առաքելության համար, և կազմակերպության երեք անդամներ կարողացան իրականացնել դիտորդություն:

Ինչ վերաբերում է բուն գործընթացին, դրանում տեղ էին գտել որոշակի կոպիտ սխալներ ու բացթողումներ: Առաջինը՝ բոլոր հավակնորդները հարցազրույցին հրավիրված էին առավոտյան ժամը 10-ին, ինչի հետևանքով չորս հավակնորդ ստիպված էր սպասել հարցազրույցի համար նախատեսված սենյակից դուրս այն դեպքում, երբ յուրաքանչյուր հավակնորդի կարելի էր հարցազրույցի հրավիրել կոնկրետ ժամի: Այս անփութության հետևանքով ՄԴ դատավորի թեկնածուի համար դիմում ներկայացրած վերջին հավակնորդը ստիպված էր իր հերթին սպասել ավելի քան երեք ժամ:



Մանրուք թվացող այս հանգամանքը բավականաչափ անհարգալից էր ՍԴ դատավորի թեկնածուի հավակնորդների նկատմամբ, չնայած որ ժամանակավոր աշխատանքային խումբը հանդես եկավ հայտարարությամբ՝ հորդորելով կատարվածը չդիտարկել անհարգալից վերաբերմունք ՍԴ դատավորի թեկնածուի հավակնորդների կամ Սահմանադրական դատարանի նկատմամբ:

Հաջորդ խնդիրն այն էր, որ առաջին հավակնորդի հետ հարցազրույցն ավարտելուց հետո, ժամանակավոր աշխատանքային խումբը հայտարարեց ընդմիջում: Ընդմիջման ընթացքում աշխատանքային խմբի երկու անդամպատշգամբում մեկ այլ հավակնորդի ներկայությամբ սկսեցին քննարկել առաջին հավակնորդի՝ իրենց հարցերին տված պատասխանները: Եվ չնայած այն հանգամանքին, որ մտքերի փոխանակումն իրականացվում էր անզլերեն և ենթադրվում էր, որ խոսակցությանը ներկա մասնակիցը վարժ չի տիրապետում անզլերենին, ակնհայտ էր, որ քննարկումը վերաբերում է հենց առաջին մասնակցին:

Ժամանակավոր աշխատանքային խմբի անդամներից մեկն ակնհայտորեն չէր հասկացել իր դերն ու գործառույթները և փոխարենը հավակնորդներին հարցեր տալու և լսելու նրանց պատասխանները, նա ստեղծված հնարավորությունն օգտագործում էր ինքնաարտահայտման համար՝ երբեմն նույնիսկ դասախոսելով հավակնորդներից ոմանց՝ իր հարցադրումների միջոցով բարձրացրած տարբեր խնդիրների վերաբերյալ: Ստեղծված իրավիճակն ակնհայտ անհարգալից վերաբերմունք էր հավակնորդների նկատմամբ և ավելորդ ձգձգում էր գործընթացը:

Ժամանակավոր խմբի աշխատանքներում բացակայում էին հարցերը հնչեցնելու համար հստակ ընթացակարգերն ու կարգապահա-

կան կանոնները. աշխատանքային խմբի անդամները հարցեր տալիս էին պատահական հերթականությամբ, ինչի հետևանքով որոշ անդամներ չարաշահում էին մյուսների համբերությունը՝ տալով ավելի շատ հարցեր կամ երկար նախաբանով ձևակերպելով հարցերն այն դեպքում, երբ մյուսները, փաստորեն, զրկվում էին հարց տալու հնարավորությունից առհասարակ:

Եվ չնայած այն հանգամանքին, որ աշխատանքային խմբի անդամները հարցազրույցներն սկսելուց առաջ հայտարարեցին, որ հարցազրույցները տևելու են երեսուն րոպե, միևնույն է այդ պայմանավորվածությունը չպահպանվեց, և հավակնորդներից մեծ մասի հարցազրույցներն ունեցան տարբեր ժամանակային տևողություն:

Ժամանակավոր խմբի աշխատանքներում անկողմնակալության կասկած է հարուցում նաև այն հանգամանքը, որ աշխատանքային խմբի անդամների մեծ մասը Երևանի պետական համալսարանում եղել են հավակնորդներից մեկի ուսանողները:

Խմբի անդամներից երկուսն ավելի վաղ երաշխավորել էին հավակնորդներից մեկին, ինչով և պայմանավորված հարցազրույցի ընթացքում հայտարարեցին, որ իրենք որևէ հարց իրենց, կողմից երաշխավորված հավակնորդին, չեն ուղղելու: Եվ չնայած այդ հանգամանքին, նրանցից մեկը հարցեր էր ուղղում այլ հավակնորդների: Աշխատանքային խմբի անդամները, շատ քիչ բացառություններով, տարբեր հավակնորդներին տալիս էին տարբեր հարցեր: Սա մտահոգիչ է, քանի որ բոլոր հավակնորդների համար կազմված նույնանման հարցաթերթիկի բացակայությունը ստեղծելու է մի վիճակ, երբ հավակնորդների վերաբերյալ կարծիքներ ներկայացնելիս, բացալայելու են համեմատության չափանիշները:

Ինչևէ, հիմնական խնդիրն այս գործըթացի ձևական լինելն էր՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքային խմբի ղեկավարը բազմիցս հստակեցրեց, որ ՀՀ նախագահը սահմանափակված չէ խորհրդատվական ժամանակավոր աշխատանքային խմբի կարծիքով և թեկնածու առաջադրելիս ունի բացարձակ հայեցողություն: Սա նշանակում է, որ եթե անգամ աշխատանքային խմբի անդամների մեծամասնությունը հավակնորդներից որևէ մեկի վերաբերյալ ներկայացնի դրական կարծիք, ՀՀ նախագահը առանց կաշկանդվելու կարող է առաջադրել բոլորովին այլ թեկնածու:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ շատ դժվար է այս ընթացակարգն անվանել խորհրդատվական: Այն հեռու էր նաև հեղինակավոր լինելուց: Ի վերջո, հարցազրույցների ընթացքում աշխատանքային խմբի անդամներին հանձնարարվեց գրել իրենց անունները կարծիքների վրա այն դեպքում, երբ ՀՀ նախագահի կողմից սահմանված կարգի համաձայն՝ կարծիքների տրամադրումը պետք է տեղի ունենար փակ ծրարներով և անանուն:

Չնայած այն հանգամանքին, որ ՍԴ դատավորի թեկնածուի հավակնորդների հարցազրույցները տեղի ունեցան 2018թ. հուլիսի 7-ին, և աշխատանքային խմբի անդամներն իրենց կարծիքն աշխատանքային խմբի ղեկավարին են ներկայացրել անհատական հարցազրույցի ավարտից հետո՝ երկօրյա ժամկետում, իսկ վերջինս ՀՀ նախագահին խորհրդատվական կարծիքը ներկայացրել է մեկօրյա ժամկետում, ՀՀ նախագահը մինչ այս պահը (1 օգոստոսի) վերը նշված թափուր հաստիքի համար չի ներկայացրել որևէ թեկնածություն:

Սրանով ակնհայտ է դառնում, որ ՀՀ նախագահը բավականաչափ լուրջ չի վերաբերվում ո՛չ ՍԴ դատավորի թեկնածուի առաջադրման իր լիազորություններին և ո՛չ էլ Սահմանադրական դատարանին:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ նախագահը որևէ պարզաբանում չի ներկայացրել հանրությանը, թե ինչ հանգամանքով է պայմանավորված ՍԴ դատավորի թեկնածուի առաջադրման գործընթացի ձգձգումը, կարելի է ենթադրել, որ նախագահ Արմեն Սարգսյանը սպասում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասերի սահմանադրականության հարցի վերաբերյալ ՍԴ-ի որոշմանը:

Սահմանադրական դատարանն իր հերթին այս հարցի քննարկումը նշանակել է 2018թ. նոյեմբերին: Այս ամենի համադրությունը լուրջ կասկածներ է ծնում, որ Սահմանադրական դատարանի ընթացիկ կազմը, գործող նախագահի գլխավորությամբ, հատուկ ձգձգում է գործընթացը՝ չցուցաբերելով առկա թափուր հաստիքների, առավելագույն կարճ ժամկետում, լրացման ուղղությամբ շահագրգռվածություն:

### **ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՍԴ ԴԱՏԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Մայիսի 22-ին մամուլում տարածված տեղեկությունների համաձայն՝ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովը մայիսի 18-ին իրականացրել է ՀՀ ՍԴ դատավորի թեկնածուի ընտրություն: Կայացած ընտրության մասին պաշտոնական հաղորդագրություն ԱԺ պաշտոնական կայքում տեղադրվեց միայն մայիսի 24-ին: Առաջադրված հավակնորդները երկուսն էին. Վարչական դատարանի դատավոր Արման Դիլանյանը և Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր Ելիզավետա Դանիելյանը:

Ի պատասխան երկու հավակնորդների վերաբերյալ ԻԵՄ-ի հարցմանը՝ հետագայում պարզ դաձավ, որ դատավոր Ելիզավետա Դանիելյանը, մեկ ձայնի առավելությամբ, Դատավորների ընդհանուր ժողովի կողմից առաջադրվել է ՍԴ դատավորի թեկնածու՝ ստանալով 88 ձայն:

Ելնելով այն հանգամանքից, որ ՍԴ-ում հերթական թափուր տեղը (Գագիկ Հարությունյանի լիազորությունների ժամկետի ավարտից հետո) առաջանում էր միայն հունիսի 15-ին, երբ լրանում էր ՍԴ մեկ այլ անդամ Վոլոդյա Հովհաննիսյանի 70 ամյակը, տրամա-

բանական ենթադրությունն այն էր, որ Դատավորների ընդհանուր ժողովը փորձել է շրջանցել ՀՀ նախագահին վերապահված առաջադրում կատարելու հերթը և առաջադրել է թեկնածու այն թափուր հաստիքի համար, որն առաջացել էր Գագիկ Հարությունյանի հեռանալուց հետո:

Այս լույսի ներքո ԻԵՄ-ը տարածեց հայտարարություն՝ կոչ անելով ԱԺ-ին չքվեարկել սահմանադրական ընթացակարգերի խախտմամբ, բացարձակ գաղտնիության և զրոյական թափանցիկության պայմաններում առաջադրված թեկնածուի օգտին:

ԻԵՄ-ը շեշտադրում էր նաև բարձր դատական պաշտոններում առաջադրված թեկնածուների մասնագիտական և անձնական հատկանիշների մանրամասն ստուգելու հանրության հնարավորության կարևորությունը [16]: Ինչևէ, այս խնդիրը հետագայում պարզաբանվում է Դատավորների ընդհանուր ժողովի կողմից՝ ի պատասխան ԻԵՄ-ի հարցմանը:

Հետաքրքրական էր այն հանգամանքը որ ԻԵՄ-ի կողմից Դատավորների ընդհանուր ժողովին ուղղարկված հարցումը հայտնի էր դարձել տիկին Ելիզավետա Դանիելյանին: Այս հանգամանքը բացահայտվեց տիկին Դանիելյանի՝ ԻԵՄ-ի հարցման պատասխան նամակից, որն էլ հիմք է տալիս ենթադրելու, որ դատավոր Դանիելյանի և Դատավորների ընդհանուր ժողովի միջև առկա էր գաղտնի, ոչ թափանցիկ հաղորդակցություն:

2018թ. հունիսի 11-ին ԻԵՄ-ը հանդես եկավ հայտարարությամբ և մտահոգություն հայտնեց դատավոր Ելիզավետա Դանիելյանի՝ ՍԴ դատավորի թեկնածու առաջադրվելու կապակցությամբ: Բացի թեկնածության առաջադրման գործընթացը քննադատելուց, ԻԵՄ-ը

քննադատեց ՀՀ վճռաբեկ դատարանի կազմից ՍԴ դատավորի թեկնածության առաջադրումը՝ հաշվի առնելով նաև Վճռաբեկ դատարանին ուղղված քննադատություններիլայն սպեկտրը, որը ներառում էր ինչպես գործող իրավաբանների գնահատականները, այնպես էլ մի շարք միջազգային ու տեղական կառույցների զեկույցները:

Իր 2013թ. «Արդար դատաքննության իրավունք» արտահերթ զեկույցում Մարդու իրավունքների պաշտպանը վեր էր հանել դատական համակարգի՝ մասնավորապես, Վճռաբեկ դատարանի կոռումպացվածության վերաբերյալ ծայրահեղ մտահոգիչ հանգամանքներ և տվել վկայություններ՝ անդրադառնալով ՀՀ վճռաբեկ դատարանի կազմում «զոնալ» դատավորների առկայության և նրանց կողմից ստորադաս դատավորների որոշումները «վերահսկելու» արատավոր պրակտիկային [17]:

ԻԵՄ-ը մտահոգիչ էր համարում այն, որ Ելիզավետա Դանիելյանը, որպես Վճռաբեկ դատարանի դատավոր, դատարանի որոշումները լուռ հավանության արժանացնելուց բացի, որևէ դատական գործով ընդհանուրից որևէ կերպ առանձնացող գործունեություն չէր իրականացրել: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանում դատավոր եղած տարիների ընթացքում, նա երբեք չէր ներկայացրել հատուկ կարծիք բոլոր այն դատական որոշումների վերաբերյալ, որտեղ ակնհայտ են եղել մարդու իրավունքների խախտման դեպքեր, այդ թվում՝ նաև այնպիսի որոշումների վերաբերյալ, որոնցում մարդու իրավունքի ոտնահարման փաստը հաստատվել էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: ԻԵՄ-ը ներկայացրել է նաև նման գործերի ոչ ամբողջական մի ցանկ:

ԻԵՄ-ը նաև ուշադրություն էր հրավիրել այն հանգամանքի վրա, որ դատավոր Դանիելյանը դիմել է նաև Վճռաբեկ դատարանի նախագահի թափուր պաշտոնի համար, և այդ ընտրության արդյունք-

ներով, Բարձրագույն դատական խորհրդի կողմից ստացել 0 ձայն, ինչը նշանակում էր, որ Բարձրագույն դատական խորհրդի տասն անդամներից և ոչ մեկը Դանիելյանի որակները չէր համարել բավարար՝ նրան այդ պաշտոնում առաջադրելու համար: Այս մտահոգությունները հաշվի առնելով՝ ԻԵՄ-ը հորդորեց խորհրդարանականներին դեմ քվեարկել տիկին Դանիելյանի թեկնածությանը և կոչ արեց ԱԺ-ին հաշվի առնել բարձրաձայնված մտահոգությունները, ինչը հնարավորություն կտա ՀՀ դատավորների ընդհանուր ժողովին բաց և թափանցիկ ընթացակարգերով առաջադրել ավելի արժանի թեկնածու[18]:

2018թ. հունիսի 13-ին տիկին Ելիզավետա Դանիելյանը ԱԺ-ում ներկայացրեց իրեն ու պատասխանեց պատգամավորների հարցերին: Քվեարկությունը տեղի ունեցավ հունիսի 18-ին, և տիկին Դանիելյանը չկարողացավ ստանալ պատգամավորների ձայների –ը: Հունիսի 28-ին ԱԺ խոսնակ Արա Բաբլոյանը հայտարարեց, որ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովը ՍԴ դատավորի թեկնածուի համար առաջադրել է ՀՀ վարչական դատարանի դատավոր Արման Դիլանյանի թեկնածությունը, որի ընտրության հարցը կքննարկվի սեպտեմբերի 10-ին գումարվող Ազգային ժողովի հերթական նիստերի առաջին նիստում [19]:

Արման Դանիելյանի թեկնածությունն առաջադրվել է Դատավորների ընդհանուր ժողովի կողմից, հունիսի 22-ին, և այդ ընտրությունը ևս իրականացվել է քաղաքացիական հանրության վերահսկողությունից դուրս՝ փակ և գաղտնի ընթացակարգերով:

- [1] RA Constitution, Article 213
- [2] RA Constitution, Article 165(1)
- [3] [http://www.ela.am/index.php?route=news/article&news\\_id=172](http://www.ela.am/index.php?route=news/article&news_id=172)
- [4] <https://www.youtube.com/watch?v=GfZafXzY0wY>
- [5] <https://www.azatutyun.am/a/29208084.html>
- [6] [http://www.ela.am/index.php?route=news%2Farticle&news\\_id=173](http://www.ela.am/index.php?route=news%2Farticle&news_id=173)
- [7] <https://www.aysor.am/am/news/2018/05/17/%D4%B1%D6%80%D5%B4%D5%A5%D5%B6-%D5%8D%D5%A1%D6%80%D5%A3%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6-%D4%B1%D6%80%D5%A1-%D4%B2%D5%A1%D5%A2%D5%AC%D5%B8-%D5%B5%D5%A1%D5%B6/1415551>
- [8] <https://www.youtube.com/watch?v=nmiPO4e8X0s>
- [9] <http://www.ilur.am/news/view/68249.html>
- [10] [http://www.ela.am/index.php?route=news%2Farticle&news\\_id=177](http://www.ela.am/index.php?route=news%2Farticle&news_id=177)
- [11] <https://www.azatutyun.am/a/29265639.html?nocache=1>
- [12] <http://www.president.am/hy/Directives/item/4579/>
- [13] [http://www.ela.am/index.php?route=news%2Farticle&news\\_id=181](http://www.ela.am/index.php?route=news%2Farticle&news_id=181)
- [14] <http://www.president.am/hy/Directives/item/4594/>
- [15] [http://www.ela.am/index.php?route=news/article&news\\_id=184](http://www.ela.am/index.php?route=news/article&news_id=184)
- [16] [http://www.ela.am/index.php?route=news%2Farticle&news\\_id=179](http://www.ela.am/index.php?route=news%2Farticle&news_id=179)
- [17] <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/8c6abc664ac32d0042d7476a67b4b899.pdf>
- [18] [http://www.ela.am/index.php?route=news/article&news\\_id=183](http://www.ela.am/index.php?route=news/article&news_id=183)
- [19] [http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=10497&year=2018&month=06&day=28&lang=arm](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=10497&year=2018&month=06&day=28&lang=arm)